«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը

Դաստիարակ՝ Անի Եղիազարյան

Մանկապարտեզ՝ «Ալափարս գյուղի մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____3

ԳԼՈՒԽ I Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները ժամանակակից մանկավարժության մեջ _____5

1.1 Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը ՀՀ-ում ___5

1.2 Երեխաների իրավունքների պաշտպանության սկզբունքները _____6

Գլուխ II Սաների իրավունքների և պարտականությունների ուսուցանումը նախադպրոցական հաստատություններում_____8

Պարապմունքի պլանը _____8

Դիտարկումներ _____12

Եզրակացություն և առաջարկություններ _____14

Օգտագործված գրականության ցանկը _____15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են և նրանից, թե որքանով են պաշտպանված նրանց իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը, կախված է նաև հասարակության ապագան: Ինչպես ցանկացած քաղաքակիրթ պետություն, որն իր առաջնահերթ գործառույթներից է համարում հասարակության անչափահաս անդամների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետությունը ևս հոգատարություն է դրսևորում իր ապագա քաղաքացիների բարոյական, ֆիզիկական, մտավոր ճիշտ զարգացման ու դաստիարակության հանդեպ:

Երեխայի իրավունքներն այն իրավունքներն ու ազատություններն են, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր երեխա անկախ տարբերություններից՝ ռասայից, սեռից, լեզվից, կրոնից, ծննդավայրից, ազգային կամ սոցիալական ծագումից:

Անհատականության ներդաշնակ զարգացման համար երեխան պետք է մեծանա սիրո և բարություն մթնոլորտում, ընտանիքում, սիրելիների և սիրող մարդկանց մեջ: Մեծահասակների խնդիրն է օգնել երեխային պատրաստվել անկախ կյանքին, դառնալ հասարակության լիարժեք անդամ, պայմաններ ստեղծել, որպեսզի երեխան ունենա նորմալ ֆիզիկական և մտավոր զարգացում:

Յուրաքանչյուր անհատ ունի որոշակի իրավունքներ և ազատություններ, որոնք պետք է հարգվեն և պաշտպանվեն:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա բացերը, որտեղ իրավունքները պատշաճ կերպով չեն ճանաչվում կամ չեն իրականացվում:

Հետազոտության վարկածը: Երեխայի իրավունքների հետազոտության վարկածները կարող են տարբեր լինել՝ կախված հետազոտության կոնկրետ ուշադրության կենտրոնում և նպատակներից: Այնուամենայնիվ, երեխաների իրավունքների հետազոտության ընդհանուր վարկածը կարող է լինել. «Երեխաների իրավունքների արդյունավետ իրականացումը և խթանումը, ինչպես նշված է միջազգային կոնվենցիաներում և ազգային օրենսդրությամբ, դրականորեն ազդում է երեխաների բարեկեցության, զարգացման և պաշտպանության վրա»:

Մեթոդաբանական հիմքը: Ուսումնասիրությունն իրականացնելիս կիրառվել են պատմական, վերլուծության, ընդհանրացման, մեկնաբանման մեթոդներ:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Հետազոտությունը կազմում է 16 էջ: Բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, դիտարկումներից, եզրակացությունից և առաջարկություններից, գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Աիդա Թոփուզյանը գրում է, որ երեխաների իրավունքների մասին ՄԱԿ կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 1992 թվականին հունիսի 1-ին: Այն մեծ դեր է խաղացել և շարունակում է խաղալ կրթության գործընթացի հումանացման գործում: Այն ընդգծում է որ մանուկներն անպաշտպան են և մեծերի օգնության ու աջակցության կարիքն ունեն, ուստի ավագները պատասխանատու են երեխաների ճակատագրի համար և կոչ է անում հաշվի առնել որ մարդու զարգացումն ու կայացումը տեղի են ունենում հենց մանկական տարիներին:

Մեր հանրապետությունը ‹‹Երեխաների իրավունքների մասին›› օրենքն ընդունել է 1996 թվականի մայիսի 21-ին, օրենքը մի կողմից սահմանում է երեխայի իրավունքները, մյուս կողմից ամրագրում է պետության, համապատասխան մարմինների ու քաղաքացիների պարտականությունը՝ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում:

Օրենքը կյանքի բոլոր ոլորտներում երեխայի շահերի պաշտպանությանն ուղված օրենսդրական նորմ է, որտեղ երեխան իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է և, քանի որ, ի տարբերություն մեծերի հատուկ պաշտպանության կարիք ունի, ուստի պետությունը ոչ միայն սահմանում է հատուկ իրավունքներ, այլև տալիս է դրանց իրականացման համար հատուկ երաշխիքներ: Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում նաև հատուկ կարիք ունեցող երեխաների կրթություն իրականացնելու համար:

Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների լուծմանը մեծապես նպաստեց նաև ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված <<Երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների գործողությունների ազգային ծրագիրը>>, որով հավաստվում է որ մեր երկիրը պատրաստակամ է զբաղվել երեխայի պաշտպանության հարցերով և առաջնահերթ նշանակություն է տալիս դրան: Ծրագրի

հիմքում ընկած են՝ Երեխաների կենսակայունության, պաշտպանության և զարգացման ապահովման համաշխարհային հռչակագիրը և 2002թ. ՄԱԿ երեխաների հարցերով գագաթնաժողովի ընդունված Բարենպաստ աշխարհ երեխաների համար փաստաթղթի հիմնադրույթը:

1.2 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ուսումնասիրելով վերջին 15 տարիների երեխաների իրավունքների և մասնավորապես կրթության իրավունքի իրացմանն ու պաշտպանությանը նվիրված համաշխարհային համաժողովի նյութերը ‹‹Ջոնթեիյեն 1990թ., Խալամանիո 1994թ., Դակար 2000թ. Բեռլին- 2001թ., ՄԱԿ գլխավոր ասամբլեա 2002թ.›› և ‹‹Հազարամյակների մարտահրավերների հռչակագիրը›› առանձնացրել ենք հետևյալ սկզբունքները որոնք կարող են նպաստել կրթության հումանացմանը և երեխաների իրավունքների իրականացմանը:

- Մանկությունը երեխայի կյանքն է, ոչ թե կյանքի ժամանակաշրջանը:
- Երեխայի ձայնը պետք է լսելի լինի, նա պետք է մասնակցություն ունենա իր կյանքին վերաբերող բոլոր հարցերի լուծմանը և կազմակերպմանը՝ իր տարիքի և հնարավորությունների չափով:
- Երեխայի կյանքն անընդհատ պետք է բարելավվի. նա պետք է հավասար մեկնարկային հնարավորություններ ունենա ընդգրկվելու ակտիվ ուսումնառության մեջ՝ իր կյանքի ցանկացած փուլում:
- Ավագ սերունդը պարտավոր է մանուկների կյանքի համար պիտանի աշխարհ կառուցել:
- Կրթությունն իրականացնող ամենակարևոր օղակը՝ դպրոցը, պետք է հարմարվի երեխաների կարիքներին, պահանջմունքներին և հետաքրքրություններին:

Ըստ տարբեր տեսաբանների՝ երեխաների իրավունքների պաշտպանությունը չափազանց կարևոր է: Այս իրավունքները հիմնված են այն համոզմունքի վրա, որ երեխաներն ունեն որոշակի հիմնարար ազատությունների և պաշտպանության

իրավունք: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (ՄԱԿԿ) լայնորեն ճանաչված շրջանակ է, որն ուրվագծում է այդ իրավունքները:

Տեսաբաններ, ինչպիսիք են Ժան Պիաժեն, ընդգծում են երեխաների ինքնավարության կարևորությունը և նրանց իրավունքը՝ մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին, որոնք ազդում են նրանց վրա: Նրանք պնդում են, որ երեխաներին պետք է վերաբերվել որպես իրենց սեփական կյանքում ակտիվ գործակալների, և որ նրանց կարծիքը պետք է հարգվի:

Այլ տեսաբաններ, ինչպիսիք են Լև Վիգոտսկին, ընդգծում են սոցիալական փոխազդեցությունների նշանակությունը և մեծահասակների դերը երեխաների զարգացման գործում: Նրանք ընդգծում են սնուցող և աջակցող միջավայրի անհրաժեշտությունը, որը կնպաստի երեխաների կրթության, առողջության պահպանման և վնասից պաշտպանվելու իրավունքներին:

Ավելին, Լոուրենս Կոլբերգի բարոյական զարգացման տեսությունը հուշում է, որ երեխաներն ունեն արդար վերաբերմունքի իրավունք: Սա ներառում է պաշտպանություն խտրականությունից, չարաշահումից և շահագործումից:

Ընդհանուր առմամբ, այս տեսաբաններն ընդգծում են երեխաների իրավունքների ճանաչման և պահպանման կարևորությունը՝ ապահովելու նրանց բարեկեցությունը, զարգացումը և ընդհանուր երջանկությունը:

Գլուխ II

ՍԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պարապմունքի պլանը

Թեման՝ «Մեր իրավունքներն ու պարտականությունները ընտանիքում»

Տեսակը՝ Զրույց. նկարի պատմում

Խումբ- միջին

Տևողությունը-25 րոպե

Թեման հետապնդում է ճանաչողական, ուսուցողական, դաստիարակչական և զարգացնող նշանակություն:

Նպատակը

- Ընդլայնել երեխաների պատկերացումները ընտանիքի անդամների թվի, պարտականությունների և իրավունքների մասին, պատվի և արժանապատվության մասին:
- Զարգացնել կապակցված խոսք կառուցելու, հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունը:
- Սովորեցնել ուշադիր դիտել նկարը, տեսնել նկարի մանրամասները և պատմել այն:

Նախապատրաստական աշխատանք

Ընտանեկան նկարների դիտում, ծանոթացում իրավունք և պարտականություն հասկացություններին:

Անհրաժեշտ նյութեր

«Ընտանիքը ընթրիքի սեղանի շուրջ» թեմատիկ նկար, մատիտ, սոսինձ, ընտանեկան նկարներ:

Պարապմունքի ընթացքը

Խթանման փուլ

Պարապմունքը սկսելուց հարցնել երեխաներին.

- Քանի՞ հոգուց է բաղկացած ձեր ընտանիքը:
- Ունե՞ս քույր կամ եղբայր :
- Ի՞նչ է աշխատում հայրիկդ (մայրիկդ):
- Ի՞նչ է անում տատիկդ (պապիկդ):
- Դու ինչո՞վ ես օգնում ընտանիքիդ:
- Ով ինչ գործ է անում տանը:
- Ո՞վ ինչ իրավունքներ ունի տանը:
- Ինչ եք անում երեկոյան, երբ ընտանիքի բոլոր անդամները տանն են:
- Ի՞նչպես ես պաշտպանում դու քո իրավունքները:

Իմաստի ընկալման փուլ

Խրախուսել երեխաներին՝ միմյանց հարցեր տալ քննարկվող թեմայի շրջանակում:

Օրինակ՝

- Ի՞նչ ես անում, երբ քեզ, ինչ-որ բան արգելում են:
- Տատիկիդ պատրաստած ո՞ր ուտելիքն ես սիրում:
- Ի՞նչ նվիրեցիր մայրիկիդ ծննդյան օրվա առթիվ:
- Տանը լսու՞մ են քո կարծիքը:
- Դու ազատ արտահայտու՞մ ես քո մտքերը:

Ֆիզկուլտդադար

Ապա նայիր քո մատներին,
Քեզ նման նրանք ունեն
Իրենց հատուկ անունները՝
Հաստ ու կարճ է բթամատը,
Ցույց է տալիս ցուցամատը,
Միջնամատը շատ երկար է ,
Մատնեմատը քիչ տկար է,
Եվ ճկույթը այս փոքրիկ,
Ահա դարձավ մի թաթիկ:

Երեխաների ուշադրությունը հրավիրել «Ընտանիքն ընթրում է» նկարին և առաջարկել պատմել այն: Հարցերով ուղղորդել տեսնել նկարի մանրամասները.

- Ի՞նչ է անում ընտանիքը:
- Ովքե՞ր են հավաքված սեղանի շուրջ:
- Ի՞նչ կա սեղանին:
- Ինչի՞ մասին են զրուցում ընտանիքի անդամները:
- Ի՞նչ տրամադրություն ունեն նրանք:
- Ինչպե՞ս են վարվում միմյանց հետ:
- Ի՞նչ ես զգում դու՝ նայելով այս նկարին:

Պարապմունքի ավարտին անցկացնել «Ի՞նչ է անում մայրիկը, ի՞նչ է անում հայրիկը» դիդակտիկ խաղը:

Երեխաներն առանց խոսքի ցուցադրեցին, թե սովորաբար ինչ են անում հայրիկներն ու մայրիկները (ճաշ են եփում, արդուկ ու լվացք են անում, գիրք են կարդում, խանութ ու շուկա են անում, մեքենա են վարում, ինչ-որ բան են նորոգում, հեռուստացույց են դիտում, ինչպես են միմյանց հետ խոսում և այլն): Մյուսները ցուցադրվող գործողություններից գուշակեցին, թե ում է դա հատուկ:

Կշռադատման փուլ

Օրվա երկրորդ կեսին միասին ստեղծել պաստառ՝ «Իմ ընտանիքը» թեմայով:

Երեխաները նկարեցին իրենց ընտանիքի անդամներին, իրենց ընտանիքին բնորոշ ընտանեկան տոների, միջոցառումների, հանգիստի, գործերի նկարները փակցրեցին պաստառին: Բոլորը փորձեցին նաև պատկերացնել իրենց իրավունքները ընտանիքում և զուգորդել դրանք պարտականությունների հետ: Երեխաները ծանոթացան ընկերների նկարներին, միմյանց պատմեցին իրենց ընտանիքների մասին: Կազմեցին ընդհանուր պատկերացում ազատության, իրավունքի, պարտականությունների, պատվի, արժանապատվության, միմյանց հետ հարգալից վերաբերմունքի, փոխօգնության և մի շարք կարևոր ընտանեկան արժեքների մասին:

Դիտարկումներ

Պարպմունքը կազմակերպված և անցկացված էր բավական հետաքրքիր և հագեցված դիդակտիկ նյութերով՝ ժամանակակից պահանջներին համապատասխան: Դաստիարակը կարողացավ մատչելի ձևով մատուցել նյութը, երեխաներին տալով սեփական անձի կարևորության և անփոխարինելիության զգացում:

Պարապմունքի ընթացքում սահուն կերպով երեխաները ծանոթանում էին սեփական իրավունքների, սոցիումում իրենց դերի և պարտականությունների հետ: Նրանք ազատորեն արտահայտում էին իրենց կարծիքը, հետամուտ լինում, որ դաստիարակը ականջալուր լինի դրան: Երեխաները կարողացան իրենց ընտանիքի մոդելը ստանալ թղթե ծառի վրա, ըստ դրա հստակեցնելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի դերը իրենց կյանքում: Պարապմունքի ընթացքում երեխաները ցուցաբերում էին ակտիվ մասնակցություն, պատասխանում էին հարցերին, տալիս հարցեր:

Պարապմունքի պլանը կազմված էր հիմք ընդունելով՝ Նախադպրոցական պետական կրթական չափորոշիչը:

Հետազոտվող թեմայի արդիականությունը շատ մեծ է այժմյան հասարակությունում, որտեղ երեխաները բախվում են իրենց իրավունքների բազմակողմանի խախտումների և հստակ չեն գիտակցում իրենց պարտականությունները: Խելացի և առողջ հասարակություն ունենալու համար պետք է դեռ մանկուց երեխաներին սերմանել իրենց իրավունքներն ու պարտականությունները և դրանց փոխկապվածությունը իրար հետ:

Տնօրեն՝ Մարինա Աթայյան

Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին: Երեխաները ընկալում էին իրենց ուղղված խոսքը, կատարում էին առաջադրանքները, կարողանում էին հստակ կապակցված խոսքով արտահայտել իրենց մտքերը, ունեին տեղեկություններ ընտանիքի կառուցվածքի, նրանում առկա բազմակողմանի կապերի մասին: Երեխաները խոսքում օգտագործելով ածականներ կարողացան արտահայտել իրենց վերաբերմունքը ընտանիքի յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Տարբերում էին յուրաքանչյուր անդամի իրավունքներն ու պարտականությունները: Երեխաները կարողանում էին պարզ ընդարձակ նախադասությունների միջոցով պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ, գտնել տրամաբանական կապեր պարտականությունների և իրավունքների միջև:

Երեխաներն ունեին գիտելիքներ նաև հարգանքի և արժանապատվության մասին: Համբերատար լսում էին իրենց ընկերներին, չէին ընդհատում:

Դաստիարակը պարապմունքից առաջ գեղեցիկ կահավորել էր խմբասենյակը դիդակտիկ և ուսումնական նյութերով: Հետաքրքիր և ուրախալի էր երեխաների խրախուսման համակարգը, որի շնորհիվ երեխաների ուշադրությունը միանգամից կենտրոնացավ և մասնակցությունը ակտիվացավ:

Թեման բավականին արդիական է գլոբոլիզացիայի և համացանցի դարաշրջանում, որտեղ բավականին հաճախ երեխաները բախվում են իրենց իրավունքների ոտնահարմանը և անտեսմանը, իրավունքների և պարտականությունների թյուրըմբռնամը: Որպեսզի երեխաները մեծանան պատասխանատու և կայացած քաղաքացիներ, անհրաժեշտ է դեռ մանկուց սերմանել իրենց իրավունքների պաշտպանությանը հետամուտ լինելու բնավորություն և սեփական պարտականությունների հանդեպ պատասխանատվություն: Երեխաների ազատությունը խստորեն կապված է իրավունքների և պատասխանատվությունների փոխազդեցության հետ:

Մեթոդիստ՝ Ն. Հովհաննիսյան

ԵԶԱՐԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պատպանությունն հանգել եմ այն եզրահանգման, որ երեխաների մեջ իրենց իրավունքների և ազատությունների մասին տարրական պատկերացումներ ձևավորելու, այլ մարդկանց և նրանց իրավունքների նկատմամբ հարգանքն ու հանդուրժողականությունը զարգացնելու համար կարևոր է ոչ միայն գիտելիքներ տալը, այլև պայմաններ ստեղծել դրանց գործնական կիրառման համար:

Երեխային որպես իրավունքի առանձին սուբյեկտ դիտարկելու դեպքում է, որ արժանի տեղ և դեր ենք հատկացնում նրան հասարակության և պետության մեջ, բացահայտում տվյալ խմբի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավական կարգավիճակը:

Չնայած իրավական ակտերի առկայությանը, որոնք երաշխավորում են երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովումը, այնուամենայնիվ երեխաների իրական պաշտպանվածության աստիճանը չի կարելի գնահատել բավարար:

Նախադպրոցական հաստատություններում երեխաների իրավունքներն իրականացնելիս պետք է գիատակցել, որ մանկությունը երեխայի կյանքն է և ոչ թե կյանքին նախապատրաստելու ժամանկաշրջան: Երեխաների իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանությանն առնչվող խնդիրները, բացթողումները մասնակիորեն պակասեցնելու համար առաջարկում ենք մշակել երեխայի հետ առնչվող մասնագիտական հաստատությունների աշխատակիցների՝ հատուկ մասնագիտական և հոգեբանական գիտելիքների տիրապետման և համապատասխան պատրաստվածության ապահովման համար չափորոշիչներ, դասընթացներ:

Երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկում ենք ստեղծել երեխաների իրավունքների պաշտպանի ինստիտուտ՝ հիմնված ինքնավարության, անկախության, անկողմնակալության, թափանցիկության արդարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա:

Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա պարտավոր է իմանալ իր իրավունքները ու պարտականությունները: Եվ մենք՝ մանկավարժներս, ոչ մի դեպքում չպետք է ոտնահարենք այն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եկեք սովորենք երեխայի իրավունքները/Ուղեցույց ուսուցիչների համար/, Երևան, 2001:
2. Թոփուզյան Ա., Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը
3. ժամանակակից մանկավարժության մեջ, 21-րդ ԴԱՐ, թիվ 3 (21), 2008:
4. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները
5. Богуславский М.В., Корнетов Г.Б., Антология гуманной педагогики, М., 1999.
6. Кобилова С.А., Леонтьева Е.А., Права ребенка и гарантии их защиты в международном и
7. Всероссийской научно-практической конференции. Екатеринбург, 1999.